ՀՈՒՇԱԹԵՐԹ ՔՎԵԱՏՈՒՓՔ, ՁԱՅՆԵՐԸ ՀԱՇՎԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԸ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՇՐՋԱՆԱԿ-ԾՐԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՀԱՄԱՐ

(Նախատեսված է այն ընտրատեղամասի համար, որտեղ քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ:)

- Նրանից հետո, երբ կհամոզվեք, որ ընտրողը հատուկ շրջանակ-ծրարի մեջ միայն մեկ քվեաթերթիկ ունի, ընտրողին բացատրե՛ք քվեաթերթիկը ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի մեջ ներմուծելու կարգը:

Ուշադրությո՛ւն



Հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկը ձայները հաշվելու հատուկ սարքի միջոցով այնպես պետք է ներմուծվի հիմնական քվեատուփի մեջ, որպեսզի անհնար լինի տեսնել ընտրողի կողմից արված ընտրությունը:

- Եթե ընտրողը չի կարող հատուկ շրջանակ-ծրարի միջոցով սարքի մեջ ներմուծել քվեաթերթիկը, օգնե՛ք նրան:

Ուշադրությո՛ւն

✔ Չի կարելի, որ մեկից ավելի ընտրողներ միաժամանակ մոտենան քվեատուփին:

✔ Դիտորդը, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը իրավունք ունեն դիտարկել ձայները հաշվելու հատուկ սարքի մեջ քվեաթերթիկը շրջանակ-ծրարի միջոցով ներմուծելու գործընթացը:

✔ Եթե ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքը վերադարձնի քվեաթերթիկը, ապա այն կհամարվի փսասված: Վնասված քվեաթերթիկի անկյունը կկտրվի ընտրողի ներկայությամբ, կմակագրվի «փսասված է», նրա վրա կստորագրի ընտրական հանձնաժողովի նախագահը և կպահվի առանձին: Հանձնաժողովի նախագահի ցուցումով ընտրողների գրանցում իրականացնողը կփոխի ընտրողի փսասված քվեաթերթիկը նոր քվեաթերթիկով:

- Քվեաթերթիկը ձայները հաշվելու հատուկ սարքի միջոցով հիմնական քվեատուփում հայտնվելուց հետո ընտրողին ցուցո՛ւմ տվեք դուրս գնալ ընտրատեղամասից:
- Հետևե՛ք ընտրողի կողմից հատուկ նախատեսված սեղանի վրա շրջանակ-ծրարի տեղադրմանը:
- Ապահովե՛ք արդեն օգտագործված հատուկ շրջանակ-ծրարների փոխանցումը ընտրողներին գրանցում իրականացնողներին: